

ՎԱՐԱԳԱՅ ՎԱՆՔԻՆ ԿՈՂՈՊՈՒՏԸ  
ԵՒ ԱԲԵՂԱՆԵՐՈՒԻՆ ԶԱՐՉԱՐԱՆՔԸ

«Պատմութիւն Առանիլ Վարդապետ Դաւթիթեցոյ» գրի էջ 499-503էն և 519-521էն  
առնելով, ազա բարգմանուրեամբ կու տանք այս պատմութիւնները: Դիրքը օպուած է  
Վաղարշապահ՝ 1896ին:

Սուլէյման Պէկ և Զօմար իրենց զօր-  
քերով գտցին Վարագայ Վանքը Նշանա-  
ւոր այս սրբատեղին մտախ արդէն իսկ  
լսած էին իսկ հիմա իրենց աչքերով կը  
տեսնէին զայն և իրենց մտքին մէջ կը  
խորհէին, թէ այսպիսի հոյակասպ և հըռ-  
չակուոր մեծաշէն վանքին մէջ գոյու-  
թիւն պիտի ունենային մթերուած թան-  
կագին սրբազն պատոներ, պղնձնեղէն  
կան Կարսոսիներ, արծաթեղիններ և ոս-  
կեղէններ ժամանակն էր որ իրենք  
գրուէին այդ բոլորը:

Նենգութեամբ և յանկարծակի կերպով  
ձերբակալեցին վանքին բոլոր բնակիչ-  
ները և զանանք կապելով՝ կալանքի մէջ  
պահցին։ Ապա զանոնք մի առ մի իրենց  
քով կանչելով, սկսուն հարցնել վանքին  
ատացուած քններուն և պահուած հարստու-  
թեան մասին և պահանջիցին բոլորը։  
Վանքին բնակիչները անոնց ցոյց առուին  
ինչ որ յայտնի էր և գործածական իսկ  
մացած իրերուն մասին ըստին, թէ քա-  
ղաքին մէջ կը գտնուին և թէ վանքին  
մէջ ուրիշ բան չին պահած, որպէսզի  
չգողցուին։

Վանքի կալանաւորները չարչարանք-  
ներու ենթարկուեցան, ոմանք նուուզ,  
իսկ ուրիշներ՝ սասակութեամբ: Անսնցմէ  
շտեր ապօտ արձակուեցան և ոմանք ալ-  
իրենց կեսնքը ապատելով՝ անվերտադ  
կերպով հեռացան:

Վանքի միաբաներէն երեքը՝ ծեր  
արեղաներ, Տէր Յովհաննէս, Տէր Սահակ  
և Տէր Մալէս Ճերրակալուեցան և Սուռ  
էջման Պէկ և Զօժմոր գտնանք կապիւլով  
դուռչութեամբ պահեցին և ըստի իրարու,  
թէ վանքին միւս բնակիչները երիտա-  
սորդ են և գանձերուն աեղեցը չեն գի-  
տեր, ասոնք ճերեր են և տեղիակ ամէն  
բանի:

Ապա անոնք տյս երեք արեղաները  
իրենց մօտ կանչելով, նախ քաղցր իօս-  
քիրազ և ապա սպասութիքով պահանջե-  
սին, որ գանձատան տեղը յայտնեն Արե-  
գոնները պատասխանացնին, որ իրենք չեն  
դիտեր, որովհետեւ անոնք կը համընտրէին  
յօժարառութեամբ մենակիլ՝ բայց յայտնել  
սրբագուն պատօներուն վայրուր

Բազմութիւն հարցուուիրաձէ ետք, սկսան  
չարչարիւ զանոնք: Նմիւս ռաքերէն կախե-  
ցին արիզաները և սկսան փայտով զօրու-  
ալը հարուածներ իշեցնել անոնց մար-  
ժիննեռուն:

Զգնահանալով այդ չարչաբառաքներէն,  
անոնք իւրաքանչիւր տրեզայի երկու  
ձևուքները ետքի կողմը տարին և երկու  
փթամատերը կապեցին իրարու, և պա-  
րանես անցընկելով անոնց երկու ձեռքե-  
րուն միջն, բարձր տեղէ մը կախիցին  
գոնոնք և ծանր քարեր բերելով՝ անոնց  
թիկունքներուն վրայ դրին: Այսպէս,  
մինչև երեկոյ ձգեցին կախողանին վրայ՝  
որով երկու ձեռքերուն յօդերը բաժնուե-  
ցան իրարմէ: Աթքանները ողբալով կ'ա-  
զաղակէին, թէ չեն գիտեր անոնց պա-  
հանջածներուն ետքը թայց անօրէնները  
կարենորութիւն չեին տար:

Ասկէ յառաջ շուրան փաթթեցին արեւ-  
զաներուն վզին, և կոնթեղին պարանց,  
որ բարտկ և պիստ է, անոնց գլխուն  
շարդ տնցուցին օդի պէս և պարանին  
մէջ փայտ դնելով՝ սկսան ուղութ զոյն։  
Պարանն ալ ուղրաւելով, թաղաւեցաւ ա-  
նոնց գլուխներուն միսին, գլուխներն  
ուլ զօրաւոր կերպով սեղմաւեցան, զիգե-  
րուն և գլուխներուն միսիրը, մորթերը  
և երակները չափազանց վնասուելով՝ տ-  
րիւնով լցուցեցան և կարծէք թէ անոնց  
երկու աչքերը ակնակապիճէն դուրս պիտի  
ցատէին։ Արեղաները անշնչացած և ու-  
շագնաց՝ մեռելի պէս գետին կ'իրան,

Արդ, ողորմելի արեգաները այսօքան շարչարանքներ կրեցին և գրեթէ իւրաքանչիւր չարչարանքի տառն կը մհոնէին և կը վերակենդանանային; Մանաւանդ որ զերջինը սարսափելի տանջանք մըն էր, և անոնք այդքան տեղարացած էին մարմով, որ սյժ չունէին ոտքի վրայ կանգոնելու; Անոնց կրած թեթև չարչարանքները չուղեցինք գրել, որովհետեւ դուք կրնաք ձեր մտքով երկակյեք . . . Այս բոլոր չար հնարքները կը գործադրեր անիծեալ և անսղորմ, անստուած և մարդարէմ Զօմար գաղանը;

Իր պատճառած անտառնելի զիշտերէն և նեղութիւններէն ետք, երբ Զօմար գիտցաւ որ արեղաները ցոյց պիտի չտան պահուած սրբութիւններուն տեղերը, ուղից ինք անձամբ որոնել զանոնք: Ան ժուրճ մը առնելով իր ձևերին մէջ, սկսաւ շրջագայիլ վանքին և նկեղեցիներուն մէջ, առներէն ներս և բոլոր տեղերը: Ուրկէ որ կասկածէր, կը կենար և մուրճով կը զարնէր Այսպէս, Սուլէյման Պէկ և Զօմար շրջագայիլով՝ մտան նկեղեցիներէն մէկաւն մէջ: Երբ կասկածէր տեղ մը մուրճով հարուածեցին և ձայն մը լսեցին, անմիջապէս քանդեցին այդ տեղը և գտան խորունկ վայր մը՝ պղնձելէններով լցուն: Վանքին պղնձելէն բոլոր անօթները հոն հաւաքուած ու պահուած էին:

Այս բոլորը գտնելէ ետք, անոնք չափագանց ուրախացոն և խօրհեցան, որ այգափիսի բաներ ուրիշ տեղեր ևս կրնան պահուած ըլլալ: Շարունակելով իրենց պրագումը, անոնք հարուածեցին ամէն կողմ: Այդտեղէն գացին ուրիշ նկեղեցի մը, և երբ հարուածեցին՝ պատը թնդաց և անմիջապէս քանդեցին զայն, բայց ոչինչ գտան:

Ազատ անցուն ուրիշ նկեղեցի մը, որը

նարուածելէ ետք, գտան իրենց որոնտծ անդը, ուր պահուած էին նաչափայտի Սուրբ Մասունքը և եկեղեցական բոլոր անօթները: Ծուտով պատը քանդեցին և գտան գանձատան գուռը: Ներս մտնելով՝ տեսան, որ լցուն էր գունձերով և Առչափայտի Մասունքը շատ մը կտաւներով փաթթուած՝ գեղեցկաշէն տրկդի մը մէջ դրուած էր:

Սուլէյման Պէկ Սուրբ Նշանը իր գրկին մէջ առնելով՝ գուրս ելաւ Եթոայ գուրս հանեցին բոլոր միւս անօթները, որոնց մէջ կային շատ մը արծաթեղէններ, սկիններ և խաչեր, ետք մը կար, որ մարդու մը հասակ ունէր և շատ ծանր էր: Անոր վրան գրուած էր Դուռի Խոչչ կային նաև սակետուփեր, արծաթապատ Աւետարաններ և ուրիշ գրքեր, քաղցներ, բուրգմաններ, կանթեղներ և պատուակներ ու մեծագին շարլազաններ, գարագոյրներ, խորանի ծածկացներ և կան կարասներ:

Արծաթեղէն բոլոր իրերը սանտուկի մը մէջ դրին և ինչ որ պղնձելէն էր՝ խորտակեցին: Միւս բոլորը ձիերու վրայ բեռուցցին: Առչափայտի Սուրբ Մասունքը առաջինն էր այդ բոլոր սրբութիւններուն մէջէն: Անոնք կրէց մը կանչելով՝ հրահնագեցին որ ընկերունը Ս. Խոչչին՝ անոր սպասուորելու համար: Այսպիսով, Սուլէյման Պէկ և Զօմար Վարդապայ Վանքին սրբազն բոլոր անօթները առնելով՝ իրենց զօրքերու առաջնորդութեամբ հասան եղանքի երկիրը: Հայոց թուականն էր թա = 1651 Քրիստոսէ ետք:

իսկ երեք արեղաները, որոնք այնաքան տանջաւեցան, թէն աարի մը սպրեցան մհամ սողունի մը պէս, միշտ փափաքելով մհանիլ՝ քան թէ ցուերով ապարիլ: Տարի մը ետք հասաւ մահը և զանոնք ապասեց իրենց տառապանքներէն:

## ԻՊՐԱՀԻՄ ՊԵԿԻ ՊԱՐՈՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ Ս. ՆՇԱՆԻՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՎԱՆ ՔԱՂԱՔ

Իպրահիմ Պէկ Խօստրի բերդը մտաւ և իր իշխանութեամբ նոււանց զայն և անոր բոլոր գտաւանները: Ան մարդոց հարց ու փորձ ընելով, տեղեկութիւններ

քաղեց իր բոլոր թշնամիներուն մտախն, ինչպէս նաև այն մարդոց՝ որոնք համախն էին Սուլէյման Պէկի սպանութեան:

իպրահիմ Պէկ ամէն որ կամաց կամաց սկսաւ կառարել իր բոլոր թշնամիները և ոչ ոքի խնայեց, ոչ ծերերուն, ոչ ժանուկներուն, ոչ այրերուն և ոչ աշ կանանց՝ այլ բոլորը հաւասարապէս ուշընչացուց։

Ան ձերբակտրել տուաւ նաև Սուլէյ-ման Պէկի կինն ու քոյրը, բանտարկեց զանոնք և զանազան տեսակի չարչարտներու ենթարկեց, որպէսզի Սուլէյման Պէկի մացեցաւ գանձերուն տեղը յայտնէին, Երբ որ այդ գանձերուն ալ տիրացաւ, գանոնք ևս սպաննեց։

Նոյն իպրահիմ Պէկը անգամ մըն ալ իր մօքը կանչել տուաւ Հոգևոց Վանքին Առաջնորդ Կետրոս Եպիսկոպոսը և ըստա անոր. ԱԱւատասիկ կը յանձնեմ քեզի Խաչափայտի Սուրբ Նշանը, մեր վանքը – Վարագայ – տոր և հոն պահէ զայն, որպէսզի հոն մեայց Պետրոս Եպիսկոպոս տարու ալ տուաւ նոյն պատասխանը՝ ինչպէս որ խոստացած էր Սուլէյման Պէկին, բայց Սուրբ Նշանը Վանք չտարաւ, այլ պահեց Խօսարի բերդին մէջ։

Այս օրէն որ Սուլէյման Պէկ Սուրբ Նշանը Վարագայ Վանքէն հանելով Խօսար տարաւ, աստվածային պատուհաններով լցուաւեցաւ Խօսարի երկիրը, որ գաղրեցաւ պատր տալիք և գտաւաը միշտ խոպութեան մէջ էր Նոյնիսկ կենդանիները չէին աներ, այլ բնդկակառակն, կը պասօտին թիւով, իսկ ամառ ատեն, Ս. Գրիգորի պահքին, սատօտիկ և անչափ ձիւն տեղաց, որ շատերը կ'ըսէին, թէ երկու կանգուն նատաւ և բոլոր անտօռունները առանց ճարակի մացին և այդպիսով շատենց ոռվաման եղան, Հազար ոչխար ունեցողին՝ միայն հարիւրը մեաց։

Ի տես այս բոլոր անքնական պատահարներուն, Խօսարի երկիրն բնակիչները իպրահիմ Պէկին քով գացին և խօսելով կատարուած աւերներուն մասին, կ'աղա-

չէին որ Սուրբ Նշանը իր տեղը վերադարձնէր, որպէսզի պատուհանները վերէ դանէին։

Իպրահիմ Պէկին կինն ալ անդադար կ'աղաչէր իր տմուսնոյն և բաղմատեասակ խօսքերով կ'աղերօէր, որպէսզի ան Ս. Նշանը վերադարձնէր Վերոյիշեալ պատճառներուն համոր իպրահիմ Պէկ հաճեցաւ Հոյոց Ս. Նշանը վերադարձնել իր տեղը։

Երբ Վան քաղաքի ժողովուրդը լսեց այս լուրը, տմէնն ալ երկնային խնդութեամբ լիցուաւեցան և նոյն ժոմուն Մալիսա Չաղապին և ժողովուրդէն ոմտնք ճամբայ ելլելով՝ շուտով հատան Խօսարի բերդը և իպրահիմ Պէկին ներկայանալով, աղաչական արտայայտութեամբ խօսացան և անոր առջե գրին երկու հազար զուրուց և տոին Ս. Նշանը և անօթներուն մեացորդները՝ խաչերը և վերադարձան վան։

Վան հասնելէ ետք, անոնք լուր տուին գաւառի բոլոր քրիստոնեաներուն և բնսկիչները գուլով՝ երկրպագութիւն ըրին Ս. Նշանին առջե և արտատուալից աչքերով գոնութիւն կը յայտնէին Աստուծոյ՝ որ այդ սրբազն մասունքը վերադարձուց իրենց Զօմար իր կողոպտած շուրջառներէն երկուաքը իրեն համար զգեստի վերածել տուած էր։

Վանեցիները Ս. Խաչափայտի մասունքը Վարագայ Վանք չտարին, սրով ետք կը կասկածէին և կը վախնային յիշելով անցած արհաւերքները։ Անոնք այս պատճառներով Ս. Նշանը պահեցին Վան քաղաքի Տիրամայր կոչուած եկեղեցին մէջ։

Ս. Նշանին վերադարձ գէպի Վան քաղաք տնդի ունեցաւ մեր Բէ՛՛ – յետ Քրիստոսի 1655 – թուականին, մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի շնորհով և մարդասիրութեամբ, որուն փառք յափեան։ Ամէն։

Հօլիվոււ, Գոլիֆ.

ՍԻՓԱՆ ՎՐԴ. ՄԻՍԵԱՆ